Տասնմեկերորդ հաղորդում

Եզրասի սպասավորության և Նեեմիայի ղեկավարման խորքային նշանակությունը՝ կառուցել եկեղեցին՝ որպես Աստծու տունն ու Աստծու թագավորությունը՝ մեր կյանքով դրսևորելով և մեր աշխատանքով առաջացնելով Նոր Երուսաղեմը

Գրվածքների ընթերցում. Հյտ 21:2, 9-11, 18, 22:1

I. Եզրասի սպասավորության խորքային նշանակությունը մարմնավորված է «մաքրում», «կրթում» և «վերակազմում» բառերի մեջ. Նեեմիայի ղեկավարման խորքային նշանակությունը մարմնավորված է «առանձնացում», «պաշտպանություն» և «արտահայտություն» բառերի մեջ. մենք պետք է համագործակցենք Տիրոջ հետ Նրա երկնային սպասավորության մեջ, որպեսզի կառուցենք եկեղեցին՝ որպես Աստծու տունն ու Աստծու թագավորությունը՝ մեր կյանքով դրսևորելով և մեր աշխատանքով առաջացնելով Նոր Երուսաղեմը՝ համաձայն այս խորքային նշանակության՝ Գ Թգ 8:48, Սղմ 48:1-2, Ա Տմթ 3:15, Եփս 2:21-22:

II. Ապրել ու ծառայել Աստծուն դարի տեսության համաձայն դարի սպասավորության մեջ նշանակում է մեր կյանքով դրսևորել և մեր աշխատանքով առաջացնել Նոր Երուսաղեմը. «Եվ նրա պարսպի շարվածքը հասպիս է. իսկ քաղաքը մաքուր ոսկի է, մաքուր ապակու նման»՝ Հյտ 21:18, Գործ 26:19, 22:15, Հյտ 21:2, 9-11.

Ա. Այն, որ քաղաքը մաքուր ոսկի է, մաքուր ապակու նման, նշանակում է, որ մենք կարիք ունենք *մաքրվելու* Աստծով Նրա սուրբ բնության մեջ և *կթվելու* միջոցով լուսավորվելու՝ կիրառելով աստվածաշնչային ուսմունքները մեր մտքի նկատմամբ՝ մեր մտքի նորոգման ու լուսավորման համար, ինչը մեզ մաքուր կդարձնի Աստծու մտքերի, խոհերի ու ճանապարհների շնորհիվ՝ հմմտ Մտթ 5:8, Եփս 4:23, Հվհ 17:17:

Բ. «Շարվածքը», կամ «կառուցման աշխատանքը», Աստծու եզակի աշխատանքն է Եռամեկ Աստծով մեր *վերակազմվելու* համար, որպեսզի մենք վերակառուցվենք Նրանով ու Նրան սպասավորենք ուրիշներին, որպեսզի Նա Իրեն ներկառուցի նրանց էության մեջ՝ նրանց Նոր Երուսաղեմում եղող էակներ դարձնելով՝ Ա Կրթ 3:9, 12, Եփս 3:16-19, Հյտ 3:12, Երգ 6:4, Եբր 11:10:

Գ. Քաղաքն իր պարսպով հանդերձ խորհրդապատկերում է Նոր Երուսաղեմը՝ որպես Աստծու հավիտենական թագավորությունը Աստծու գլխավորության ներքո Աստծու մարդկանց *առանձնացման* և Աստծու շահերի *պաշտպանության* համար՝ Նեմ 4:17, Եփս 5:26:

Դ. Այն, որ քաղաքի պարիսպը հասպիս է (Աստծու կյանքն իր հարստությամբ) և քաղաքը ոսկի է (Աստծու աստվածային բնությունը), բացահայտում է, որ Աստծու հավիտենական տնտեսությունը մեզ դարձնելն է

նույնը, ինչ Նա է, կյանքով և բնությամբ, բայց ոչ Աստվածությամբ, Նրա եզակի *արտահայտության* համար՝ Ծնդ 1:26, Հվի 10:10բ, Բ Պտ 1:4, Հյտ 4:3, 21:10-11, 18:

III. Նոր Երուսաղեմը մեր կյանքով դրսևորել և մեր աշխատանքով առաջացնել նշանակում է ապրել ու ծառայել Եզրասի սպասավորության ու Նեեմիայի ղեկավարման խորքային նշանակության մեջ.

Ա. Մենք պետք է մնանք բոլոր խառնուրդներից մաքրվելու գործընթացում՝ ընդունելով Տիրոջն ու Նրա հավիտենական տնտեսության շահերը որպես մեր եզակի նպատակը՝ Եզր 9:2, Մտթ 5:8, Ա Տմթ 3:9, Բ Կրթ 6:4ա, 6, Ղկս 9:54-55, Եբր 4:12, Գ Թգ 8:48.

1. Մենք կարող ենք խառնուրդներից մաքրվել Աստծու լուսավորելու, մերկացնելու և դատելու գործընթացի շնորհիվ, խաչի ոչնչացնելու և վերացնելու շնորհիվ, արյան մաքրելու և լվանալու շնորհիվ և Հոգու հոսելու և հագեցնելու շնորհիվ՝ Սղմ 139:23-24, 51:7, 10, Հյտ 22:1:
2. Մենք կարող ենք խառնուրդներից մաքրվել Աստծու մաքուր խոսքում եղող կյանքի ջրով լվացման գործընթացի միջոցով. որքան շատ է մարդը մնում Աստծու խոսքի մեջ, այնքան մաքուր է նա դառնում՝ Սղմ 12:6, 119:9, 140, Եփս 5:26, Եսյ 55:8-11:
3. Ղևտացվոցի 19:19-ը բացահայտում է, որ Աստված ուզում է ամեն ինչ իր տեսակի համաձայն լինի՝ առանց որևէ խառնուրդի՝ Հյտ 17:3-6, Երկ Օր 22:5, 9-11, հմմտ Ծնդ 1:11, 21, 24-26, 2:7-9.
   ա. Այն, որ անասունը պետք է առանց խառնուրդի զուգավորեին, նշանակում է, որ կյանքում խառնուրդ չպետք է լինի. Աստծու կյանքով ապրողները չպետք է մսեղիով ապրեն՝ հմմտ Գղտ 5:16:
   բ. Այն, որ սերմը պետք է առանց խառնուրդի ցանվեր, նշանակում է, որ խոսքի սպասավորության մեջ միայն մեկ տեսակի սերմ՝ մեկ տեսակի ուսմունք պետք է ցանվի՝ Աստծու հավիտենական տնտեսության եզակի ուսմունքը՝ Երկ Օր 22:9, Ա Տմթ 1:3-4, 6:3:
   գ. Այն, որ հագուստը պետք է առանց կտորների խառնուրդի պատրաստվեր, նշանակում է, որ մեր վարքի մեջ խառնուրդ չպետք է լինի. նրանք, ովքեր Նոր Կտակարանի կյանքով են ապրում, չպետք է Հին Կտակարանի պատվիրաններով ապրեն (Գղտ 2:19-20, 5:1-6), իսկ նրանք, ովքեր Տիրոջն են պատկանում, չպետք է հեթանոսների սովորույթներով ապրեն (Ղտց 20:23, հմմտ Եփս 4:17, Հռմ 12:2ա):
4. Ա Պտ 1:22-ում ասվում է. «Քանի որ ձեր շնչերը ճշմարտության հանդեպ ցուցաբերած հնազանդությամբ մաքրել եք առ անկեղծ եղբայրասիրություն, ապա մաքուր սրտից միմյանց ջերմորեն սիրեցեք».
   ա. Դա նշանակում է, որ որպեսզի մեր շունչը (մեր միտքը, զգացմունքն ու կամքը) մաքրվի, հարկավոր է, որ այն ազատվի Աստծուց զատ մյուս բոլոր բաներից և կենտրոնացած լինի Աստծու՝ որպես միակ առարկայի և եզակի նպատակի վրա (Ա Կրթ 2:9-

10, Բ Թսղ 3:5). երբ հնազանդվում ենք ճշմարտությանը՝ Քրիստոսի հանդեպ մեր հավատքի բովանդակությանը և իրականությանը, (Բ Տմթ 4:7, Տտս 1:1). մեր ողջ շունչը կենտրոնանում է Աստծու վրա և այդպիսով մաքրվում Աստծուց զատ մյուս բոլոր բաներից:

բ. Քանի որ մեր շնչերի մաքրումը մեր ողջ էությանը մղում է Աստծու վրա կենտրոնանալու, որպեսզի Նրան մեր ողջ սրտով, մեր ողջ շնչով ու մեր ողջ մտքով սիրենք (Մրկ 12:30), ապա այսպիսի մաքրման արդյունքը անկեղծ եղբայրասիրությունն է լինում՝ այն, որ սրտանց, ջերմորեն սիրում ենք նրանց, ում սիրում է Աստված (Հվի 13:5, 14-17, 34-35, Բ Պտ 1:5, 7, Հռմ 12:9-11, Բ Տմթ 1:6-7, Ա Թսղ 3:12, 4:9-10, Եբր 13:1, Ա Հվի 2:5-8, 3:11, 23, 4:7-8, 16-21):

Բ. Մենք պետք է կրթվենք, որպեսզի կրթենք ուրիշներին ճշմարտությամբ Աստծու վկայության՝ Նրա ընդհանրական արտահայտության համար՝ Բ Տմթ 2:2, Ա Տմթ 3:15-16, 6:3, Ա Կրթ 14:31.

1. Սուրբ քաղաքի՝ Նոր Երուսաղեմի տասներկու հիմքերը կրում են Գառան տասներկու առաքյալների անունները, ինչը ցույց է տալիս, որ Նոր Երուսաղեմը կառուցվում է առաքյալների ուսմունքի՝ Աստծու տնտեսության մասին առողջ ուսմունքի համաձայն՝ Հյտ 21:14, Գրծ 2:42, Բ Տմթ 1:15, Տտս 1:9, Բ Տմթ 2:2:
2. Եզրասը հմուտ էր Աստծու օրենքում, որը կապված է Աստծու տնտեսության հետ. օրենքը Քրիստոսի՝ որպես Աստծու Խոսքի, Աստծու վկայության, Աստծու պատկերի, Աստծու արտահայտության նախատիպն է՝ Ելց 16:34, 34:28, հմմտ Հյտ 1:2:
3. Շնորհիվ այն բանի, որ գալիս ենք Քրիստոսին՝ որպես կենդանի խոսքի գրված խոսքում, Նա կարող է դառնալ կիրառված խոսքը, որը մեզ թույլ է տալիս ներարկվել Նրանով ու դառնալ Հիսուսի վկայությունը՝ Հվի 1:1, Հյտ 19:13, Հվի 5:39-40, 6:63, Հյտ 1:2, 10-11:
4. Մնալով Աստծու տնտեսության վերաբերյալ ուսմունքի եզակի սպասավորության մեջ՝ կարող ենք ըմբռնել Խոսքի խորքային նշանակությունը, որպեսզի լցվենք կյանքի լույսով՝ Նեմ 8:8, 13, Մտթ 4:12-16, Հվի 1:4-5:
5. Մենք պետք է սովորենք օգտագործել նոր լեզուն՝ «Հուդայի լեզուն», նոր մշակույթի՝ նոր մարդու աստվածամարդկային մշակույթի մեջ՝ Նեմ 13:23-24:

Գ. Մենք պետք է վերակազմվենք շնորհքով, որը պատրաստված Եռամեկ Աստված է, որ մեզ համար կյանք ու ամեն ինչ է դառնում՝ Ա Պտ 5:10, Բ Կրթ 13:14, Եբր 10:29.

1. Տասներկու առաքյալները ներկայացնում են Նոր Կտակարանի շնորհքը, ինչը նշանակում է, որ շնորհքը Նոր Երուսաղեմն առաջացնելու աղբյուրը, տարրն ու միջոցն է՝ Հյտ 21:14:

2. Մենք պետք է կազմվենք շնորհքով շնորհքի վրա, տքնենք շնորհքի շնորհիվ, շնորհք բաշխենք և շնորհքի խոսքը սպասավորենք՝ Հվի 1:16, Ա Կրթ 15:10, Ա Պտ 4:10, Գրծ 20:32:
3. Նոր Երուսաղեմը կառուցվում է այն բանի շնորհիվ, որ Աստված Իրեն մարդու կազմության մեջ է ներդնում, որպեսզի մարդուն դարձնի նույնը, ինչ Ինքն է, կյանքով և բնությամբ, բայց ոչ Աստվածությամբ, որպեսզի Աստված ու մարդը մեկ ընդհանրական ամբողջություն դառնան և փոխբնակատեղ լինեն՝ Հյտ 21:2-3, 10-11, 18-22:
4. Մենք պետք է միայն մեկ աշխատանք կատարենք՝ Նոր Երուսաղեմի աշխատանքը. մենք պետք է մեկ լինենք մեր ներսում գործող Աստծու հետ, երբ Նա Իր ընտրյալներին հաջորդաբար անցկացնում է Իր օրգանական փրկության քայլերով՝ վերածննդով, սրբացմամբ, նորոգմամբ, փոխակերպմամբ և կերպարանակցմամբ մինչև փառավորում:
5. Այսկերպ մենք մակարդակ առ մակարդակ բարձրանում ենք մինչև բարձրագույն կետին հասնելը, որտեղ մենք բոլորս նույնն ենք դառնում. որտեղ այլևս չկա մսեղի և բնական էություն. բոլորը հոգու մեջ են և բոլորը Նոր Երուսաղեմի էակներ են. սա Աստծու աշխատանքի բարձրագույն կետն է, իսկ մենք Նրա համագործակիցներն ենք՝ Հվի 5:17, Փլպ 2:13, Հյտ 4:3, 21:11, Ա Կրթ 3:9, 12, Բ Կրթ 6:1, Ա Թսղ 3:2:
6. «Պատրաստված և ավարտունացած Եռամեկ Աստված Իր ցանկության բարեհաճության համաձայն և Իր տնտեսության բարձրագույն մտադրության համար Իրեն ներկառուցում է Իր ընտրյալ մարդկանց մեջ և Իր ընտրյալ մարդկանց՝ Իր մեջ, որպեսզի Քրիստոսի մեջ կազմություն ձեռք բերի որպես աստվածայնության և մարդկայնության միաձուլումը իբրև Իր օրգանիզմը, և Քրիստոսի Մարմինը՝ որպես Իր հավիտենական արտահայտությունն ու փոխբնակատեղը փրկագնող Աստծու և փրկագնված մարդու համար: Այս հրաշալի թանկագին կառուցվածքի վերջնական ավարտունությունը կլինի Նոր Երուսաղեմը հավիտենապես»՝ Վիթնես Լի:

Դ. Մենք պետք է լիովին առանձնացվենք առ Աստված, որպեսզի լիովին հագենանք Աստծով՝ ապրելով սուրբ կյանք եկեղեցական կյանքի համար, ինչը մեզ սուրբ քաղաք կդարձնի՝ Հյտ 21:2, Բ Պտ 1:4.
1. Մեր մտքի նորոգումն ու դրանից հետևող փոխակերպումը մեզ առանձնացնում ու փրկում է մեր բնությունից ու ապրելակերպից, որոնք ներծծված են աշխարհի տարրով՝ Հյտ 21:12ա, Հռմ 8:5-6, 12:2, 5-11, Եփս 4:23:
2. Մեր հոգում ապրելու և Քրիստոսին՝ որպես թաքցված մանանայի ուտելու շնորհիվ մենք կարող ենք հաղթել աշխարհին, որպեսզի Աստծու կառույցը դառնանք՝ Ա Հվի 5:4, 18-19, 21, Հյտ 2:12-17, հմմտ Հվի 14:30:
3. Մենք պետք է լիովին առանձնացվենք Բաբելոնի կռապաշտ աշ -

խարհից, որը բնութագրվում է գործարարության, կամ առևտրի, չարությամբ, որն ընչաքաղցություն, խաբեություն և դրամի հանդեպ սեր է ներառում. մեր քրիստոնեական կյանքը պետք է զերծ լինի դրամի հանդեպ սիրուց, իսկ մեր քրիստոնեական աշխատանքը չպետք է դրամ ստեղծող առևտուր լինի՝ Զք 5:5-11, Ա Տմթ 3:3, 8, 6:5-10, Գործ 11:29-30, 20:33-34, Բ Տմթ 3:2-4, Եբր 13:5, Բ Կրթ 2:17, 12:15, հմմտ Դ Թգ 5:15-27.

ա. Սատանան գործարար է՝ վաճառական, և նրա դատողությունը համապատասխանում է նրա առևտրային սկզբունքին, որը հակառակ է Աստծու մտահղացմանը մարդ ստեղծելիս՝ Եզկ 28:16, 18, Հոբ 1:9, հմմտ Փլպ 3:7-8, Ծնդ 1:26:

բ. Բաբելոնի վաճառած բեռից առաջինը ոսկին է, իսկ վերջինը՝ մարդկանց շնչերը. «մարդկանց շնչեր» արտահայտությունը վերաբերում է այն մարդկանց, ովքեր իրենց որպես աշխատուժ են վաճառում՝ Հյտ 18:12-13, հմմտ Բ Պտ 2:3, 15:

գ. Սա ոչ միայն գալիք Բաբելոնի նկարագրությունն է, այլև այսօրվա աշխարհի. մարդիկ իրենց շունչը, կյանքը, այսինքն՝ հենց իրենց, վաճառում են իրենց աշխատանքին՝ անտեսելով Աստծուն և իրենց հավիտենական ճակատագիրը՝ հմմտ Ղկս 12:13-21:

դ. Աստծու գերիշխանությամբ գործարարության չարությունը, որ Իսրայելի ժողովուրդն իր գերության օրոք սովորել էր բաբելոնացիներից, վերադառնալու է Բաբելոն (Սենաարի երկիր)՝ Զք 5:10-11, Ծնդ 11:2, 9:

Ե. Մենք պետք է կառուցենք պարիսպը, որպեսզի պաշտպանենք եկեղեցին՝ որպես Աստծու տունը.

1. Մենք կարող ենք պարիսպը կառուցել Գառան հաղթական արյամբ, որը կիրառվում է մեր նկատմամբ մեր ապաշխարելու, մեր մեղքերը խոստովանելու և Աստծուց Նրա մաքրումը խնդրելու միջոցով՝ Հյտ 12:11, Սղմ 51:18:

2. Մենք պետք է հովվենք Աստծու հոտը՝ հնչեցնելով եզակի նորկտակարանյան սպասավորության «մեկ փողը»՝ նրանց ազդարարելով Աստծու ողջ որոշումը, որպեսզի ավարտունացնենք Աստծու խոսքը, ինչպես նաև Տիրոջ պաշտպանող նախազգուշացումն ու առողջ ուսմունքը, այնպես որ նրանք չափահաս դառնան Քրիստոսի մեջ՝ Ա Կրթ 14:8, Եփս 4:11, Գործ 20:26-35, Եզկ 33:1-11, 34:25, Կղս 1:24-29:

3. Մենք պետք է կառուցենք պարիսպը, որպեսզի պաշտպանենք եկեղեցին՝ մարտնչելով Մարմնում՝ Հռմ 16:20.

ա. Մարմինը հագնում է Աստծու ողջ սպառազինությունը և պաշտպանություն է տրամադրում յուրաքանչյուր անդամին. մենք պետք է փնտրենք Մարմնի որոշումն ու ծածկը, որպեսզի ստանանք Մարմնի պաշտպանությունն ու պահպանությունը՝ Եփս 6:10-20, Մտթ 16:18, Գործ 21:4, 11-12:

բ. Հոգևոր պատերազմը մղվում է հետևյալ սկզբունքով. մեկը հազարին կհալածի, իսկ երկուսը տասը հազարին փախուստի կմատնի՝ Երկ Օր 32:30, Ժղվ 4:9-12, Ելց 17:11-13:

4. Մենք պետք է կառուցենք պարիսպը, որպեսզի պաշտպանենք երկրի վրա Աստծու աստվածայնության հարստության շահերն ու Նրա ավարտունության ձեռքբերումները՝ հմմտ Հվի 1:12-13, Եսյ 9:6, Ա Կրթ 15:45բ, Բ Կրթ 3:17, 4:5, Կղս 1:18, Գրծ 2:36, 5:31, Եբր 4:14, 9:15, 7:22, 8:2, Ա Հվի 2:1, Հվի 15:26, Հռմ 8:34, 26:

Զ. Մենք պետք է ապրենք Քրիստոսով և Քրիստոսին դրսևորենք մեր կյանքով՝ այդպիսով մեծարելով Քրիստոսին, որպեսզի կարողանանք կառուցել եկեղեցին՝ որպես Աստծու արտահայտությունը՝ Ելց 40:34-35, Գ Թգ 8:1-11, Հռմ 13:14, 12, Ա Կրթ 3:16-17, Փլպ 1:19-21ա, Հյտ 21:3, 22, 10-11.

1. Քաղաքի պարիսպն Աստծու արտահայտության համար է. այսպիսով՝ «պարիսպը կառուցել» (Նեմ 2:17) նշանակում է կառուցել եկեղեցին՝ որպես Աստծու արտահայտությունը (Մտթ 16:18, Եփս 2:20-22, 4:11-16, Ա Կրթ 3:9-17, Հյտ 4:3, 21:11, 18-19):
2. Իր վերականգնման մեջ Տերն այսօր աշխատում է նորմալ իրադրությունը վերակերտելու վրա, որպեսզի Քրիստոսը լինի պատշաճ եկեղեցու՝ որպես Իր արտահայտության ներսում՝ Եփս 3:16-21, Հյտ 4:3, 21:11, 18-19:
3. Աստծուն արտահայտելու համար մենք պետք է փրկվենք մեր բնական նախահակումից և ինքնատիպությունից՝ ապրելով միաձուլված կյանքով Աստվածային Երրորդության հետ Քրիստոսի ամբողջ Մարմնի միախառնման կյանքում՝ Հռմ 5:10, Ղտց 2:4-5, Ա Կրթ 12:24-25:
4. Աստծուն արտահայտելու համար մենք պետք է ամեն օր սրբացվենք ու նորոգվենք խոսքում եղող ջրի լվացմամբ, որպեսզի ներկայացվենք Քրիստոսին՝ մեր Փեսային, որպես Նրա մաքուր, փառավոր, Աստծուն արտահայտող հարսը՝ խ. 24, Եփս 5:26-27:

© 2022 Living Stream Ministry